Մեր մակոյկը արդէն մօտեցել էր։

— Ողջոյն, տէր։

— Բարի երթաք։

Ու բարի դնացինք։

Առեղծուածային Սեւանայ կղզին հրեց մեզ, եւ լճի ներքնախորը նստած ուղտերի կարաւանը կարծես շարժուեց։

Ժայռերը բարձրացան։ Պատ։ Աչքերիս վրայ մութ էր նստել։

«Տուն։ Տուն նամակ եմ գրել»։

Խե՜ղճ արեղայ, կարծում է, որ դեռ տուն ունի։ Մենք ամէնքս կարծում ենք, որ դեռ տուն ունենք։

Ո՞ւր։ Ո՞րտեղ։

Զեռքս ջուրի մէջ դրի, սառը խածեց մատերս։

— Ջուրը պա՞ղ ա...

— Պա՛ղ ա։

Ու մատերս կոպերիս քսեցի։

* * *

Նաւը, նա՛ւը։

Վարը, լայնածաւալ լճի մէջ, փոքրիկ, երախայական խաղալիքի նման, մեծ ծուխ հանելով, առաջանում էր ճերմակ մի նաւ։ Մեծ նաւահանդիստների մէջ անհանդիստ պտտող բզէզ այն նաւիկներից մէկը, որոնք հեռուից եկած նաւերի առջեւ խելօք շնիկի նման վազում են եւ ճանապարհ ցոյց տալիս։

Սուլեց։ Եւ ակամայ, ամէնքս ծիծաղեցինք։

Բարակ, խռպոտ մի ձայն, ա՜յնքան տարօրինակ այստեղ։ Եկա՛յ։

Եկաւ։

6·

Իշխանութիւնը թեւերը վեր է քաշել ու փուռից հանած «թաղաղուզիի» իւղալի կտորներ է բաժանում մեզ։

Հիմա որ նաւի վրայ ենք — Լուկաչինի հետ «Լուկաչին» նաւի վրայ — լիճը ժամը մի քանի կիլոմետր ներս է մտնում մեր աչքերից եւ դեղին մելանով նկարում է իր ափերը։

Զախ կողմի ժայռուտ, խստադէմ լեռները գնալով աւելի վեր են ցցւում եւ իրենց սրածայր գագաթները մխրճում երկնքի մէջ։ Դիմացի ափը տպարանական շարուածքի նման թափել է իր գրերը եւ անհուն մի մելամաղձութիւն սատկած ձիի նման ուռել է արխանգների մէջ։

Կոնեակի չիչը բռնած՝ իշխանութիւնը աշխատում է մի քիչ ուրախութիւն բաժանել. ստեղծել, այնպէս, ընտանեկան մթնոլորտ։ Սակայն, մեղանից ամէն մէկը կարծես մի մի դորտ է սեղմել ձեռքին, ու կոնեակի բոցը ընկնում է սառոյցի վրայ։

Տխո՛ւր ընտանիք։

Տեղաւորուել ենք, ով ինչպէս կարողացել է՝ երկարած դէմքերով, վիրաւորուած նայուածքներով։ Կարծես ամէն մարդ հորի մէջ է նայում։ Բարի կամքը չէ որ պակասում է։ Ինքը Լուկաչինը պարզ, մի մետաղից շինուած մարդ է, լուրջ, գործունեայ եւ համակրելի։ Իդէալ գործակատարի տիպար, հեռաւոր իշխանի ամայի աղարակը վերաշինող, միամիտ եւ միակողմանի։

Եկել ենք մեր երկիրը տեսնելու համար։ Ամէնքս էլ դրսից եկած, օտարական ճամբորդների դիրք ենք բռնել։ Կուկի յոռնախորդներ, կամ աւելի շուտ, աղքատ աշակերտների համար սարքուած ձրի ճամբորդութիւն։ Ղուղիի մի կտոր, մի բաժակ կոնեակ եւ սրտերի մէջ փռուած մենակեաց եւ տրտում այս լիճը, որի բնոյթը ոչ ոքի համար ըմբռնելի չէ։

Ծերունի ճարտարապետ ակադեմականը՝ կարճատես եւ հիւանդ իր աչքերով դիտում է տարածութիւնը, ու դլուխը վայր դցում։

Դերասանը կուչ է եկել մի անկիւնում եւ իր բոլոր դերերը մոռացել է։

Նկարիչը նայում է դետնին։

Ծանր այս լռութեան մէջ, Լուկաչինը ցուցամատը ուղղում է դէպի ափը եւ աչքերը աչքերիս մէջ դնելով՝ ցուցնում է։

— Այնտեղ, Այրի վանքն է...

Ամէնքս նայում ենք այն կողմը։ Հեռում նշմարւում է հայ եկեղեցիի մի գմբէթ, կանգնած ամայի մի անապատում։ Երկիր եւ եկեղեցի նոյն գոյնն ունին՝ դեղնած հողի, անձրեւ կերած կաւի այն չեզոք գոյնը, որը հայկական լերկութեան վրայից վայր է ընկնում շարժուող մահի նման եւ մարդու սիրտը խածնում։

Այրի վա՛նքը։

Քանդուածութեան, փլուզումի յիշատակ։ Զորացած լաւայի ճեղքուածքներ։ Կիզիչ արե-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան